# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.05.2021թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**

**թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/24**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Բարվա» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ

Վ. Գասպարյանի (լիազորագիր՝ տրված 28.04.2021թ.),

«Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ

Հ. Քոյլոյանի (լիազորագիր՝ տրված 30.04.2021թ.),

քննելով ՀՀ Շիրակի մարզի Սարապատի համայնքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար հակակարկտային կայանի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՇՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-2021/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Բարվա» ՍՊԸ-ի կողմից 29.04.2021թ. ներկայացված (29.04.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/24 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

**1. «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Բարվա» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 29.04.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

1. «ՀՀ Սարապատ համայնքի գնահատող հանձնաժողովի /այսուհետ նաև՝ հանձնաժողով/ 16.04.2021 թվականի թիվ 2 որոշմամբ հրապարակել է հրավեր և հայտարարություն՝ ծածկագիր ՇՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-2021/1 հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով /այսուհետ նաև՝ հրավեր/:

2. Հրավերով սահմանվել է տեխնիկական բնութագրի այլ պայմաններ. «1.15 Այլ պահանջներ

-Հակակարկտային կայանը պետք է ունենա թռչող օբյեկտների վրա ներազդման անվտանգության վերաբերյալ եզրակացություն:

-Հակակարկտային կայանը պետք է ունենա ՀՀ Ստանդարտների Ազգային Ինստիտուտի կողմից հաստատված տեխնիկական պայմաններ»:

3. Մրցույթի շրջանակներում հայտեր են ներկայացրել «Բարվա» ՍՊԸ-ն /այսուհետ նաև՝ Բողոքաբեր/ և «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն:

4. 26.04.2021 թվականին հատերը բացվել են, և գնային առաջարկով 1-ին տեղ է զբաղեցրել Բողոքաբերը, որի վերբերյալ կազմվել է արձանագրություն, որը պատշաճ չի հրապարակվել:

«Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն տեխնիկական բնութագրի վերաբերյալ հայտարարության մեջ նշել է.

«-Հակակարկտային կայանը կունենա թռչող օբյեկտների վրա ներազդման անվտանգության վերաբերյալ եզրակացություն:

-Հակակարկտային կայանը կունենա ՀՀ Ստանդարտների Ազգային Ինստիտուտի կողմից հաստատված տեխնիկական պայմաններ»:

5. Արձանագրությամբ հանձնաժողովը գտել է, որ մասնակիցները ներկայացրել են մրցույթին համապատասխան նյութեր և նշանակել բանակցություններ:

6. 27.04.2021 և 28.04.2021թթ գրություններով Բողոքաբերի կողմից ներկայացվել է պատճառաբանված առարկություններ բանակցությունների կազմակերպման արգելքի վերաբերյալ, որին պատասխան չի ստացվել:

7. Համաձայն ՀՀ Ստանդարտների Ազգային Ինստիտուտի պաշտոնական կայքի «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն չունի տեխնիկական պայմաններ հրավերով սահմանված:Գտնում ենք, որ բողոքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն.

«1.Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ, կետի համաձայն.

«2. Գնման առարկայի բնութագրերը՝

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը»:

Նշված նորմերից հետևում է, որ գնում կատարելու նպատակով մրցույթ հայտարարելու դեպքում այն պետք է իրականացվի Պատվիրատուի /հանձնաժողովի/ կողմից այնպես, որ պահպանվեն մրցակցային ոչ խտրական հիմունքներով մրցույթի անցկացման պայմանները:

Հրավերի 4.3-րդ կետի համաձայն՝.Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը, որը ներառում է՝

ա) հավաստում սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին.

2) իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր) »:

ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 40.-րդ կետի

համաձայն. «Հայտերի բացման և գնահատման նիստում՝ 5) հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,:

Տվյալ դեպքում հանձնաժողովը կիրառել է Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի բ կետը այն դեպքում երբ ներկայացրած հատերից արդեն իսկ ակնհայտ է մյուս մասնակցի հրավերի պահանջներին անհամապատասխանությունը, հետևաբար հանձնաժողովը չէր կարող բավարար գնահատեր մասնակցին, որը հատուկ պայման է բանակցություններ վարելու համար:

Ասվածը հիմնավորվում է նախ նրանով, որ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն չունի հայտով ներկայացված փաստաթղթերը՝ թռչող օբյեկտների վրա ներազդման անվտանգության վերաբերյալ եզրակացություն, ՀՀ Ստանդարտների Ազգային Ինստիտուտի կողմից հաստատված տեխնիկական պայմաններ: Ավելին, հայտով մասնակիցը նշել է, որ «կունենա» արտահայտությունը, որպիսի արտահայտությունը իրենից ենթադրում է ապագայում կատարվելիք գործողություն:

Բացի այդ Համաձայն ՀՀ Ստանդարտների Ազգային Ինստիտուտի պաշտոնական կայքի «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն չունի տեխնիկական պայմաններ, «տոռ» բառի որոնման արդյունքում անգամ որպես արտադրող նշվում է այլ ընկերություն «տոռեռո սվիթ» ՍՊԸ, այսինքն՝ հրավերով սահմանվածը բացակայում է:

Կարգի 67-րդ կետի համաձայն. «Գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է»:

Նշված նորմի կիրառման նպատակով Բողոքաբերը ուղարկել է գրություններ մասնակցի ներկայացված տվյալները պարզելու համար, սակայն հանձնաժողովը հրաժարվել է կատարել:

Այսպիսով, հանձնաժողովը, սահմանափակված լինելով իր իսկ կողմից սահմանված հրավերով և ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսված ժամկետներով չի պահպանել դրանք, որի արդյունքում պետք է վերջինիս պարտավորեցնել կայացնել որոշում դադարեցնել /չեղյալ հայտարարել/ 26.04.2021 թվականի արձանագրությունը, դադարեցնել բանակցությունները «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի տվյալների պարզման նպատակով պարտավորեցնել հանձնաժողովին կասեցնել մրցույթը հարցում կատարելու նպատակով կամ որից հետո արդեն իսկ հանձնաժողովը մասնակցի պայմանջների անբավարար լինելու վերաբերյալ տվյալներ ստանալու պայմաններում պետք է Բողոքաբերին ճանաչի հաղթող, իսկ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի մասով նախաձեռնի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու ընթացակարգ»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 06.05.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

Այնուհետև՝ 06.05.2021թ., Ընկերությունն ի լրումն վերը շարադրվածի հայտնել է հետևյալը.

«Սույն մրցույթի շրջանակներում բողոք ներկայացնելուց հետո շարունակվել է մրցույթը, հանձնաժողովի կողմից թույլ է տրվել խախտումներ, որը հիմք է ընտրված մասնակից ճանաչելու արձանագրությունը դադարեցնելու համար:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն. «Եթե կոնկրետ իրավահարաբերությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտով սահմանված է ժամկետների հաշվարկման այլ կարգ, ապա տվյալ ակտով կարգավորվող իրավահարաբերությունների ժամանակ կիրառվում է այդ նորմատիվ իրավական ակտով սահմանված ժամկետների հաշվարկման կարգը:

« «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն.

«1.Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն.

«1. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը»:

Տվյալ դեպքում բողոքը հրապարակվել է 29.04.2021 թվականին հետևաբար այդ օրը ներառյալ պետք համարվեր կասեցված մրցույթը, նկատի ունենալով, որ օրենքով հրապարակման ժամ չի նշվում: Ավելին անգամ հանձնաժողովը 01.05.2021 թվականի կասեցման արձանագրության մեջ ժամ չի նշել, միայն թվագրել է 29.04.2021 թվական, իսկ ընտրված մասնակցի արձանագրությունը հրապարակել բողոքի հրապարակումից 1 ժամ 20 րոպե հետո, այսինքն՝ ընտրված մասնակցի ճանաչելու արձնարգությունը կարող է դադարեցվել թե որպես հետևանք, թե որպես առանձին հիմքով պայմանավորված»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել «ՇՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-2021/1» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել /չեղյալ հայտարարել/ 26.04.2021 թվականի թիվ 2 արձանագրությունը , դադարեցնել 29.04.2021 թվականի թիվ 3 արձանարգությունը, «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի տվյալների պարզման

նպատակով պարտավորեցնել հանձնաժողովին կասեցնել մրցույթը հարցում կատարելու նպատակով:

Ինչպես նաև ի պատասխան «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշման Ընկերության կողմից ներկայացվել են հետևյալ առարկությունները.

««Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են առարկություններ, որում մասնավորապես նշված է «...մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգումը, ոչ թե պարտականություն է այլ իրավունք, և պարտադիր կատարման գործողություն չէ, որով չի կարող փաստվել Պատվիրատուի կամ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների ոչ իրավաչափությունը, այլ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացարձակ իրավունքն է օգտվելու իր իրավուներից և պարտադիր կատարման ենթակա է միայն օրենքով սահմանված պարտականությունները...»:

Հարկ եմ համարում նախ նշել, որ «բացարձակ իրավունքն է» արտահայտությունը չի կարող առհասարակ պատկանել հանձնաժողովին, քանի որ այն հիմնական իրավունք է և այդ իրավունքը տրվում է մարդուն՝ անձին. նման իրավունքների շարքին է դասվում օրինակ «կյանքի իրավունքը» /ՀՀ Սահմանադրություն գլուխ 2, մարդու հիմնական իրավունքեր և ազատություններ, սահմանադրական իրավունք/: Այսինքն՝ «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի ներկայացուցչի կողմից նշված իրավունքի առկայության պնդումը առարկայազուրկ է:

Ինչ վերաբերում է հանձնաժողովի պարտականություն չլինելուն, ապա երրորդ անձի նման դիրքորոշումը ևս անհիմն է, քանի որ Պատվիրատուն, ի դեմս հանձնաժողովի պետական մարմին է, որը գործում է պետության անունից և ի շահ պետության:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

Այսինքն՝ օրենքում նշված փաստակազմի առկայության պայմաններում չի կարող խոսք լինել հայեցողական լիազորության մասին. այլ կերպ, կարգի 67-րդ հոդվածի փաստակազմի՝ մասնակցի տվյալների վերաբերյալ կասկած հարուցող տեղեկատվության ստացմամբ, կամ այլ կերպ ձեռքբերմամբ հանձնաժողովը պարտավոր է կատարել համապատասխան ստուգում:

«Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առարկություններ, որում մասնավորապես հայտի հիմնավորվածությունը պայմանագրի կատարման փուլում ստուգելու հետ կապված նշված է. «...նման դրույթի սահմանումը ինքնանպատակ չէ, քանզի ոչ բոլոր ապրանքներն են արտադրվում Հայաստանում և ոչ միշտ են ներկրվում մեծ քանակներով ապահովելով շուկայում ազատ վաճառք, որոշակի ապրանքներ ներկրվում են ըստ անհրաժեշտության և սպառման պահաջարկի, որի արդյունքում նոր միայն հրանավոր է դրանց համապատասխան սերտիֆիկացումը...»:

Տվյալ դեպքում երրորդ անձի դիրքորոշումից անգամ պարզ է դառնում, որ հրավերով սահմանված հավաստումը առ այն, որ համապատասխանում է հրավերին բացակայում է, ուստի առկա է կարգի 67-րդ կետի անվերապահ կատարման անհրաժեշտություն: Հետևաբար, անհիմն է երրորդ անձի դիրքորոշումը և նպատակ է հետապնդում բողոքը մեկնաբանել այլ բովանդակությամբ»:

**2. <u>ՀՀ Շիրակի մարզի Սարապատի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>**

ՀՀ Շիրակի մարզի Սարապատի համայնքապետարանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 30.04.2021թ. թիվ 160 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 2021 թվականի ապրիլի 29-ի N /ԲՔԱ-ԳՆ/2/6640-2021 գրության պահանջի՝ Ձեզ ենք ներկայացնում ԳՀ ընթացակարգով ՀՀ Շիրակի մարզի Սարապատի համայնքապետարանի 2021թ. կարիքների հակակարկտային կայանի ձեռք բերման և տեղակայման նպատակով կազմակերպված ՇՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-2021 ծածկագրով գնման ընթացակարգի բոլոր փաստաթղթերը բնօրինակից արտատպված /սկանավորված/ տարբերակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 06.05.2020թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**<u>3. «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>**

«Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է գրավոր միջնորդություն՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/24 բողոքով իրեն որպես երրորդ կողմ ներգրավելու վերաբերյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից միջնորդությունը բավարարվել է:

«Բիզնես էլիտա» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«ՀՀ Շիրակի մարզի Սարապատի համայնքապետարանը (այսուհետ նաև Պատվիրատու) իր կարիքների համար «հակակարկտային կայան»-ի ձեռքբերման և տեղադրման նպատակով 19.04.2021 թվականին հրապարակել է թիվ «ՇՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-2021/1» գնանշման հարցումը (այսուհետ նաև Գնման ընթացակարգ).

Գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊ ընկերությունը (այսուհետ նաև Մասնակից), ինչպես նաև «ԲԱՐՎԱ» ՍՊ ընկերությունը (այսուհետ նաև Բողոք բերող).

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.04.2021 թվականի թիվ 2 արձանագրությամբ Մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատվել է բավարար: Նույն արձանագրությամբ 29.04.2021 թվականին ժամը 11:00-ին հրավիրվել են միաժամանակյա բանակցություններ.

29.04.2021 թվականին հրավիրված բանակցություններին մասնակցել է միայն «ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊ ընկերությունը և Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.04.2021 թվականի թիվ 3 արձանագրությամբ ճանաչվել ընտրված մասնակից:

«ԲԱՐՎԱ» ՍՊ ընկերության կողմից բողոքարկվել է Գնման ընթացակարգը՝ «ՇՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-2021/1» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովին 26.04.2021թ. արձանագրությունը դադարեցնելու /չեղյալ հայտարարել/ և «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի տվյալների պարզման՝ հարցում կատարելու, նպատակով հանձնաժողովին մրցույթը կասեցնելու պարտավորեցման պահանջների մասին:

Անդրադառնալով բողոքաբերի դիրքորոշումներին հայտնեմ, որ դրանք ակնհայտ անհիմն երկու հիմնավորումներով:

1-ին. ուսումնասիրման դարձնելով բողոքաբերի պահանջը պետք է փաստել, որ այն վերաբերվում է Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին որոշակի գործողություններ պարտավորեցնելուն: Բողոքաբերը նշել է նաև, որ հանձնաժողովի սահմանափակված լինելով իր իսկ կողմից սահմանված հրավերով և ՀՀ կառավարության

որոշմամբ նախատեսված ժամկետներով չի պահպանել դրանք, որի արդյունքում, որի արդյուքնում գնահատել է հանձնաժողովին որոշակի գործողություններ պարտավորեցնելու ենթադրյալ իրավական հիմքերի ծագման մասին:

Նշվածի ուսումնադիրման արդյունքում պետք է փաստել, որ բողոքաբերի կողմից վերացական մեկնաբանություններ են տրվել իրավիճակին և հստակ չի նշվել թե՞ հանձնաժողովը հրավերի որ պահանջներով էր սահմանափակված և ՀՀ կառավարության, որ որոշման և որ ժամկետները չի պահպանել և արդյունքում ինչ էին իրենից ենթադրում այդ ժամկետների պահպանումը:

Գնումների մասին ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները: Նշված իրավակարգավորումնը ինքնանպատակ չէ, այն ուղղված է կարգավորելու բողոքաբերի գործողությունները և նրա վարքագծի հստակությունը: Այսինքն բողոքաբերը հստակորեն պետք է մատնանշի այն բոլոր փաստեր և դրան նկատմամբ կիրառելի իրավական նորմերը, որոնց վրա հիմնվում է բողոքը: Դեռևս չանդրադառնալով բողոքաբերի կողմից ինչ որ փնտրման համակարգերից օգտվելու, ենթադրյալ եզրակացություններ անելու և վերացական դիրքորոշումներ կատարելուն, նշեմ, որ նույնիսկ այդ դեպքում բողոքաբերը պարտավոր էր մատնանշել այն իրավական հիմքերը, որոնք գործով առկա ապացույցների համադրության մեջ կհիմնավերին կամ կհերքեին բողոքը: Նշվածի պահպանման պարագայում բողոքաբերը ինքը կհանգեր այն հետևության, որ Գնման գործընթացը կազմակերպվել է իրավաչափ: Թեպետև բողոքաբերը իր բողոքում հղում է կատարել, որոշակի իրավական նորմերի, սակայն դրանք որևէ կերպ չեն սահմանում այնպիսի լիազորություններ պատվիրատուի համար, որոնց հիման վրա Պատվիրատուն իրավասու է կասեցնել Գնման ընթացակարգը և կատարել որոշակի հարցումներ, մյուս մասնակիցների կասկածները փարատելու համար: Ընդ որում բողոքաբերի կողմից վկայակոչած իրավական նորմերը կարգավորում են գնահատող հանձնաժողի գործողությունները, որոնցում նույնպես հստակ սահմանված են ընթացակարգային լիազորությունները և որտեղ առկա չէ բողոքի պահանջին առնչվող իրավակարգավորումներ: Պայմանավորված նշվածով պետք է նշեմ, որ բողոքը ակնհայտ անհիմն է Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չունի բողոքի պահանջով ներկայացված լիազորություններ:

Ի դեպ անդրադառնամ բողոքաբերի կողմից խեղաթյուրված մեկնաբանությանը: ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 67-րդ հոդվածի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Նշված իրավական նորմի մեկնաբանությունից ակնհայտ է, որ գնահատող հանձնաժողովը կարող է միայն պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը: Այսինքն օրենսդիրը պարտադիր վավերապայման է սահմանել, որ պետք է առկա լինի պատճառաբանված որոշում, և ի դեպ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը: Բողոքաբերի կողմից փաստերի և իրավական նորմերի խեղաթյուրված մեկնաբանման արդյունքում նշվել է, որ մասնակիցը հայտով ներկայացրել է հետևյալը «հակակարկտային կայանը կունենա թռչող օբյեկտների վրա ներազդման անվտանգության վերաբերյալ եզրակացություն և ՀՀ ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից հաստատված տեխնիկական պայմաններ»: «հակակարկտային կայանը կունենա թռչող օբյեկտների վրա ներազդման անվտանգության վերաբերյալ եզրակացություն և ՀՀ ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից հաստատված տեխնիկական պայմաններ» եզրույթները իրենցից ենթադրում են կատարման փուլում պարզման ենթակա հանգամանքներ և ըստ բողոքաբերի ապագայում կատարվեիք գործողություններ, որի պարագայում անտրամաբանական է բողոքաբերի այն դիրքորոշումը, որ Կարգի 67-րդ կետի հիմքով հանձնաժողովը պետք է կատարի մասնակցի կողմից ներկայացված ապագայում՝ պայմանագրի կատարման փուլում կատարվելիք գործողությունների տվյալների իսկության ստուգում, ուստի պայմանավորված նշվածով գտնում եմ, որ Կարգի 67-րդ կետի դրույթները կիրառեի չեն պայմանագրի կատարման փուլում պարզման ենթակա հանգամանքների նկատմամբ:

Ընդ որում հրավերի 8.20. կետի համաձայն՝ մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր: Հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Նշվածի մեկնաբանությունից նույնպես ակնհայտ է, որ Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը և նշվածը կարող է կատարել միայն մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի և տեղեկությունների իսկությունը ստուգելու նպատակով: Նախ սույն դեպքում մասնակիցը նշել է, որ մատակարարվող ապրանքը կունենա անհրաժեշտ փաստաթղթեր և երկրորդ ամենակարևորն է Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը: Նշվածի արդյունքում պետք է փաստել, որ մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգումը, ոչ թե պարտականություն է այլ իրավունք, և պարտադիր կատարման գործողություն չէ, որով չի կարող փաստվել Պատվիրատուի կամ Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների ոչ իրավաչափությունը, այլ Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացարձակ իրավունքն է օգտվելու իր իրավունքներից և պարտադիր կատարման է ենթակա միայն օրենքով սահմանված պարտականությունները: Նույն սկզբունքով բողոքաբերը կարող է հրաժարվել ներկայացված բողոքից, և ի՞նչ այս դեպքում նույն բողոքաբերի դիրքորոշմամբ կարող ենք ներկայացնել պահանջ բողոքից հրաժարվելու վերաբերյալ, իհարկե ոչ և նշվածով պայմանավորված պետք է փաստել, որ բողոքը ակնհայտ անհիմն է:

2-րդ. անդրադառնալով մասնակցի՝ «Բիզնես էլիտա» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտին և Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

գործողություններին գտնում եմ, որ դրանք կատարվել են իրավաչափ հետևյալ հիմնավորումներով:

Կարգի 21-րդ կետի 1-ին մասի ա պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Գնման ընթացակարգի հրավերի 4.3. կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը, որը ներառում է՝

ա) հավաստում սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին.

բ) (...).

2) իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր): Ընդ որում մասնակիցը կարող է ներկայացնել մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում և մակնիշ ունեցող ապրանքներ:

2) (...).

Նշված իրավական նորմերի մեկնաբանությունից ակնհայտ է, որ Գնման ընթացակարգի հրավերով կարող են սահմանվել՝ ապրանքների գնման դեպքում, մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և

արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Հրավերի պահանջների համաձայն՝ հենց նույն իրավական նորմով առաջնորդվելով Պատվիրատուն սահմանել է ապրանքի տեխնիկական բնութագրին համապատասխան հայտ ներկայացնելու պահանջ, իսկ արդեն ապրանքի համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման պահանջը կարող է լինել միայն պայմանագրի կատարման փուլում, որով պայմանավորված այն չի կարող հանդիսանալ հայտի ուսումնասիրման և գնահատման ժամանակ, որպես պարտադիր վավերապայման, իսկ Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կոչված է իրականացնելու միայն օրենքով իրեն վերապահված լիազորությունները: Նման դրույթի սահմանումը ինքնանպատակ չէ, քանզի ոչ բոլոր ապրանքներն են արտադրվում Հայաստանում և ոչ միշտ են ներկրվում մեծ քանակներով ապահովելով շուկայում ազատ վաճառք, որոշակի ապրանքներ ներկրվում են ըստ անհրաժեշտության և սպառման պահանջարկի, որի արդյունքում նոր միայն հնարավոր է դրանց համապատասխանության սերտիֆիկացումը, որը հենց ապագայում կատարվող գործողություն է՝ ներկրումից հետո, այդ իսկ պատճառով դրանց վերաբերյալ համապատասխանության ստուգումը հնարավոր է կատարել պայմանագրի կատարման փուլում, որը և հենց օրենսդիրը նպատակ է հետապնդել և սահմանել Կարգի 21-րդ կետով: Ավելին նշվածի ապահովման համար հրավերի հավելված հանդսացող պայմանագրի 2.1.4. կետի գ ենթակետով սահմանվել է տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով, 2.4.5. կետով՝ պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով գնորդին հանձնելու, իսկ Գնորդի պահանջով ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր տրամադրելու և 2.4.9 կետով ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը Գնորդին հանձնելու պարտականություններ, որոնք նույնպես վկայում է ապրանքի համապատասխանության ուսումնասիրման հնարավորություն պայմանագրի կատարման փուլում»:

**<u>4. ԳԲՔԱ-ՆԳ-2021/24 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ԳԲՔԱ-ՆԳ-2021/24 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ Շիրակի մարզի Սարապատի համայնքապետարանի կարիքների համար հակակարկտային կայանի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՇՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-2021/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Բարվա» և «Բիզնես էլիտա» ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի Հավելված N 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 1.15 կետով սահմանվել են հետևյալ պահանջները՝

- Պետք է իրականացվի կայանի հողանցում:

- Հակակարկտային կայանը պետք է ունենա թռչող օբյեկտների վրա ներազդման անվտանգության վերաբերյալ եզրակացություն:

- Հակակարկտային կայանը պետք է ունենա ՀՀ Ստանդարտների Ազգային Ինստիտուտի կողմից հաստատված տեխնիկական պայմաններ:

3. «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի մասնակցության հայտի Հավելված 1.1-ի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի 1.15 կետով ներկայացվել է հետևյալը.

- Կիրականացվի կայանի հողանցում:

- Հակակարկտային կայանը կունենա թռչող օբյեկտների վրա ներազդման անվտանգության վերաբերյալ եզրակացություն:

- Հակակարկտային կայանը կունենա ՀՀ Ստանդարտների Ազգային Ինստիտուտի կողմից հաստատված տեխնիկական պայմաններ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.04.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի կողմից ներկայցված հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին:

**5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Բարվա» ՍՊԸ-ի 29.04.2021թ. բողոքը և բողոքի լրացումը՝ կից փաստաթղթերով, «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի 05.05.2021թ. գրությամբ հայտնած դիրքորոշումը և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ

ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Այսպես՝ ՀՀ Շիրակի մարզի Սարապատի համայնքապետարանի կարիքների համար հակակարկտային կայանի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՇՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-2021/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Բարվա» և «Բիզնես էլիտա» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի Հավելված N 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 1.15 կետով սահմանվել են հետևյալ պահանջները՝

- Պետք է իրականացվի կայանի հողանցում:

- ***<u>Հակակարկտային կայանը պետք է ունենա թռչող օբյեկտների վրա ներազդման անվտանգության վերաբերյալ եզրակացություն:</u>***

***<u>- Հակակարկտային կայանը պետք է ունենա ՀՀ Ստանդարտների Ազգային Ինստիտուտի կողմից հաստատված տեխնիկական պայմաններ:</u>***

«Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի մասնակցության հայտի Հավելված 1.1-ի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի 1.15 կետով ներկայացվել է հետևյալը.

- Կիրականացվի կայանի հողանցում:

***<u>- Հակակարկտային կայանը կունենա թռչող օբյեկտների վրա ներազդման անվտանգության վերաբերյալ եզրակացություն:</u>***

***<u>- Հակակարկտային կայանը կունենա ՀՀ Ստանդարտների Ազգային Ինստիտուտի կողմից հաստատված տեխնիկական պայմաններ:</u>***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.04.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի կողմից ներկայցված հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին:

Այսպիսով՝ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով:

«Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի հայտի ուսումնասիրության արդյունքում հարկ եմ համարում արձանագրել, որ այն բողոքով վիճարկվող մասով ներկայացված է հրավերի պահանջներին համապասխան, հետևաբար Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները, այն է՝ «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին համապատասխան գնահատելը, իրավաչափ է:

Ինչ վերաբերում է բողոքաբերի՝ բողոքով ներկայացրած պնդմանը և պահանջին, այն, որ. ««Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն չունի հայտով ներկայացված փաստաթղթերը՝ թռչող օբյեկտների վրա ներազդման անվտանգության վերաբերյալ եզրակացություն, ՀՀ Ստանդարտների Ազգային Ինստիտուտի կողմից հաստատված տեխնիկական պայմաններ: Ավելին, հայտով մասնակիցը նշել է, որ «կունենա» արտահայտությունը, որպիսի արտահայտությունը իրենից ենթադրում է ապագայում կատարվելիք գործողություն:

Բացի այդ համաձայն ՀՀ Ստանդարտների Ազգային Ինստիտուտի պաշտոնական կայքի «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն չունի տեխնիկական պայմաններ, «տոռ» բառի որոնման արդյունքում անգամ որպես արտադրող նշվում է այլ ընկերություն՝ «տոռեռո սվիթ» ՍՊԸ, այսինքն՝ հրավերով սահմանվածը բացակայում է, հետևաբար Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից իրավաչափ չէ վերջինիս հայտը բավարար գնահատելը և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է պահանջ՝ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի տվյալների պարզման նպատակով պարտավորեցնել հանձնաժողովին կասեցնել մրցույթը հարցում կատարելու նպատակով», ապա վերոգրյալի վերաբերյալ գտնում եմ՝ Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծով նախատեսված պահանջը՝ «- Հակակարկտային կայանը պետք է ունենա թռչող օբյեկտների վրա ներազդման անվտանգության վերաբերյալ եզրակացություն:

- Հակակարկտային կայանը պետք է ունենա ՀՀ Ստանդարտների Ազգային Ինստիտուտի կողմից հաստատված տեխնիկական պայմաններ»,

կնքվելիք պայմանագրի կատարման համար տեղի ունեցող պարտադիր պահանջ է, հետևաբար Ընթացակարգի մասնակիցների կողմից Ընթացակարգի մասնակցության հայտի Հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով պետք է ներկայացվի, որը նաև ներառվելու է կնքվելիք պայմանագրում, իսկ դրա կատարումը պայմանագիր կնքած ընկերությունը պետք է ապահովի պայմանագրի կատարման փուլում:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ տվյալ դեպքում Ընթացակարգի մասնակիցները չունեն նման պարտավորություն՝ հայտով ներկայացրած ապրանքի համար վերոնշված պայմանի ապահովման, քանի դեռ ընտրված մասնակցի հետ չի կնքվել հակակարկտային կայանի ձեռքբերման և տեղակայման պայմանագիր, ուստի գնահատող հանձնաժողովին «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանի իսկության ստուգման նպատակով հարցում կատարելու պարտավորեցնելու անհրաժեշտություն առկա չէ:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «Բարվա» ՍՊԸ-ի 29.04.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը և Ընթացակարգի հրավերը՝ գտնում եմ, որ ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Բարվա» ՍՊԸ-ի կողմից 29.04.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

**Գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**